— Չբարկացայ: Եթէ մի այսպիսի խօսք Սագօն ասէր, ես կը բարկանայի, բայց Մըհէն ինչ որ ասէ, ես չեմ բարկանայ. նրա սիրտը իստակ է, նա չէ հասկանում ինչ բան է սէրը:

— Դու հասկանո՞ւմ ես:

Մարօն ոչինչ չպատասխանեց, որովհետեւ նոյն րոպէում լսելի եղաւ շան խորին կնձկնձոցը եւ իսկոյն լռեց գիշերային մթութեան մէջ:

— Վա՛հ, այս ի՞նչ արեց, երեւի այն յիմարը շանը սպանեց, — ձայն տոեց Մարօն եւ ճրագը խլեց, դուրս թռաւ:

Ես էլ գնացի նրա հետ: Եւ իրաւ, շունը անմռունչ կերպով ընկած էր բակի մէջ. ճրագի լուսով մենք տեսանք՝ նրա գլուխը Մըհէի լախտի մի հարուածից բոլորովին փշրոել էր եւ ուղեղը դուրս թափոել:

— Թաղե՛մ քո սարսաղ գլուխը, ինչո՞ւ սպանեցիր շանը, — ասաց Մարօն ցաւողի կերպով:

Մըհէն, որ դեռ կանգնած էր իր զոհի մօտ, ոչինչ չպատասխանեց, մօտեցաւ բակի դռանը, ոտքով մի կողմ գլորեց ահագին քարը, որ դրած էր դռան ետեւը փականքի տեղ, եւ լախտը իր ուսին դնելով, լուռ ու մունջ դուրս գնաց:

— Ու՞ր է գնում նա, — հարցրի ես Մարօից:

— Աստուած ոչ գիտէ նրա գլուխը: Նա երբ որ իր մահակը վեր առաւ, տրեխները հագաւ, կնշանակէ հեռու տեղ ունէ գնալու: Թէ չէ ողջ տարին նա բոբիկ ոտքերով է ման գալիս. ոտնամանը մի ծանրութիւն է նրա համար:

— Նա հիմա էլ ոտնաման չունէր:

— Նրա համար, որ շունը կերաւ: Փակիր դուռը, Ֆարհատ:

Ես մօտեցայ դռանը. այն քարը, որ Մըհեն մէկ ոտքով հեռու գլորեց որպէս թեթեւ տաշեղ, ես հազիւ կարողացայ երկու ձեռքով իր տեղը դնել: Մարօն տեսնելով այդ, սկսեց ծիծաղել:

— Այնպէս, խօ ես էլ կարող էի մօտ մղել քարը:

— Դէ՛, փորձիր:

Եւ իրաւ, Մարօն աւելի թեթեւ կերպով, քան թէ ես, վեր առաւ ահագին քարը եւ բարձրացրուց գետնից:

— Դու ուժեղ ես, Մարօ, դրա համար էլ Մըհէն քեզ սիրում է, որ իր պէս ուժեղ ես: